«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ՝ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԻՔ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

ԵՆԹԱԹԵՄԱ՝ Ի՞ՆՉ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՐԵԼԻ Է ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԿԱՐԴԱԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

ԱՌԱՐԿԱՆ՝ ԴԱՍՎԱՐ

ՀԵՏԱԶՈՏՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ՝ ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՍՏՂԻԿ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԻ Մ. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3
ԳԼՈՒԽ 1. ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԻՔ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ.....5
ԳԼՈՒԽ 2. Հետազոտական մաս 22
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 29
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ.....30
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....31

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդու բազմակողմանի զարգացածության հիմքը դրվում է կրտսեր դպրոցում:Դպրոցի առջև ծառացած կարևոր խնդիրներից է աշակերտների բանավոր և գրավոր խոսքի զարգացումը, որի հիմքերը դրվում են տարրական դասարաններում: Խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքներն անհնար է պատկերացնել առանց ընթերցանության, քանի որ ընթերցանությունը մտածողության և մտավոր զարգացման ակունքներից մեկն է: Այն երեխաների համար պիտի դառնա գիտելիքների ձեռքբերման ամենազոր գործիք, հոգևոր հարստության աղբյուր: Արդի կրթական համակարգում, հատկապես տարրական դասարաններում մեծ տեղ է հատկացվում սովորողների երևակայական և ստեղծագործական կարողությունների ձևավորմանը:

Կրտսեր դպրոցականի համար, որպես ընթերցանության միջոց, գոյություն ունի միայն դասագիրքը: Կարդալու միջոցով աշակերտները ոչ միայն ճանաչողական գիտելիքներ են ստանում, այլև զգում են մայրենի լեզվի գեղեցկությունը, նրբորեն ընկալում բառը, խոսքը, իսկ դրան հնարավոր է հասնել նույն բնագրի բազմակի ընթերցման ճանապարհով: Բնագրի յուրաքանչյուր ընթերցումը երեխայի առջև բացում է նոր աշխարհ՝ իր գույներով ու երանգներով, քանի որ ամեն մի ընթերցման ժամանակ նա հայտնաբերում է նախկինում չնկատված նոր մանրամասներ: Եվ որպեսզի կրկնաընթերցումը ձանձրալի չլինի, նախատեսվում են կարդալու բազմաթիվ ձևեր:

Հետազոտության ուսումնասիրության թեմայի արդիականությունը պայմանավորված է տարրական դպրոցի մայրենիի դասերի առջև դրված զարգացնող խնդիրներով, բազմամշակույթ, գրագետ, բարձր ընթերցողական կարողությամբ և կրթվող անձ դաստիարակելու կենսական պահանջով:

Ուսումնասիրության նպատակն է մշակել մեթոդական ցուցումներ, որոնք կնպաստեն կարդալու կարողության զարգացմանը:

Ուսումնասիրության ընթացքում մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել գրականություն կարդալու տեսակների վերաբերյալ,

- ուսումնասիրել տարրական դասարանների մայրենիի դասագրքերի բը-նագրերն և ներկայացնել կարդալու տեսակների կիրառման առանձնահատկությունները,
- մշակել և փորձարկել կարդալու տեսակների կիրառման մեթոդական քայլաշար, որը կզարգացնի կրտսեր դպրոցականի կարդալու կարողությունը,
- ներկայացնել և հիմնավորել, թե որքանով է բացատրական ընթերցանության բաղադրամասերի կիրառումը նպաստում կրտսեր դպրոցականի կարդալու կարողության զարգացմանը:

Ուսումնասիրության ընթացքում կիրառել ենք հետևյալ մեթոդները.

- տեսական գրականության ուսումնասիրում,
- հարցախույզի անցկացում և արդյունքների վերլուծություն,
- փորձարարական դասերի վարում,
- մայրենիի դասագրքերի բնագրերի

վերլուծություն:Ուսումնասիրության նորույթը.

- մշակել ենք ընթերցանության տեսակների կիրառմամբ կրտսեր դպրոցականների կարդալու կարողության զարգացմանը նպաստող մեթոդական ցուցումներ:
- մշակել ենք կրտսեր դպրոցանակի կարդալու կարողության զարգացմանը նպաստող մեթոդական ցուցումներ,
- մեր մշակած գիտամեթոդական ցուցումները և դրանց իրականացման մեթոդական քայլաշարը կարող են կիրառվել պրակտիկանտ-ուսանողների կողմից, ինչպես նաև գործնականորեն իրագործվել տարրական դպրոցում:

ԳԼՈՒԽ 1. ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԻՔ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Տարրական դասարաններում մայրենիի դասի հիմնական նպատակը կարդալու ուսուցումն է: Գրաճանաչության այբբենական շրջանում արդեն ձևավորվում են աշակերտների կարդալու կարողությունները: Աշակերտները կարդում են բառեր, բառակապակցություններ, նախադասություններ, ապա պատմություններ: Այդ ամենը աշակերտներին նախապատրաստում է բացատրական ընթերցանության մեթոդով կազմակերպվող մայրենիի դասին: Կարդալու կարողության մշակման արդյունավետությանը նպաստում է բարձրաձայն ընթերցանությունը:

Հոգեբաններն ու մեթոդիստներն առանձնացնում են կարդալու հմտության ձևավորման 3 փուլ՝ վերլուծական, համադրական և ավտոմատացված:

Վերլուծական փուլում տեսողական ընկալման միավորը տառն է կամ վանկը՝ նկատի ունենալով, թե ընթերցողն ինչպես է կարդում: Համադրական փուլում կարդալու ամենափոքր միավորը դառնում է բառը. ընթերցողը կարդում է ամբողջական բառերով, իսկ ավտոմատացված կարդալու ժամանակ կարդալու միավորը նախադասությունն է. ընթերցողը կարդում է նախադասություններով[1]:

Տարրական դասարաններում մայրենիի դասագրքերում զետեղված բնագրերի ընթերցումն իրականացվում է մի քանի ձևով՝ ձայնով կամ բարձրաձայն, լուռ կամ մտքում, շարունակելով, բացատրելով կամ մեկնաբանելով, ընտրովի և դերերով: Կարդալու տեսակներից յուրաքանչյուրն ունի իրականացման որոշակի մեթոդիկա:

Տարրական դասարաններում ընդունված է ձայնով կարդալը, քանի որ այն նպաստում է կարդալու կարողության մշակմանն ու կատարելագործմանը, ինչպես նաև կարդացածը հասկանալու կարողության ձևավորմանը:

Առանձնացվում է ձայնով կարդալու երկու տեսակ՝ բարձրաձայն և ցածրաձայն:

Ձայնով և լուռ կարդալը միմյանցից տարբերվում են նրանով, որ մի դեպքում

[1] Տե՛ս՝ Ջ. Հ. Գյուլամիրյան, Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, «Զանգակ» հրատ., Երևան 2018, էջ 102:

խոսքի արտաբերումն առկա է, իսկ մյուս դեպքում այն բացակայում է: Լուռ կարդալը շատ նման է ներքին խոսքին, իսկ ներքին խոսքը կապված է խոսքի մասնակի կամ կրճատ արտաբերման հետ:

Բարձրաձայն ընթերցանության հիմնական առանձնահատկությունն այն է, որ կարդացողը ոչ միայն իր համար է կարդում, այլև ուրիշների, ուստի պետք է այնպես կարդա, որ լսողը կարողանա հասկանալ կարդացածի բովանդակությունը:

Բարձրաձայն ընթերցելիս գործընթացին մասնակցում են երեխաների ոչ միայն աչքերն ու արտասանական կառույցը, այլև ականջները: Բարձրաձայն ընթերցողի մոտ մի փոքր դժվարություն է առաջանում, քանի որ բարձրաձայն կարդալու հետ միաժամանակ պետք է հետևի կարդացածի մտքին՝ այն ճիշտ հասկանալու համար, կարողանա գտնել կարդացածի միտքը արտահայտելու և այն լսողներին փոխանցելու ճիշտ եղանակը[2]:

Տարրական դասարաններում աշակերտները դասարանում և տանը գրքի վրա աշխատելիս ավելի շատ պետք է ձայնով կարդան, քան լուռ, որովհետև թե՛ կարդալու կարողության ձևավորման և թե՛ կարդացածը հասկանալու տեսակետից այս տարիքում երեխաների համար սեփական ձայնի ունկնդրումը կարևոր նշանակություն ունի:

Լուռ կարդալը մտքում կարդալն է, այն իրականացվում է միայն աչքերի շարժումով՝ առանց խոսելու և ձայնի մասնակցության: «Անցնելով մտքում կարդալուն՝ աշակերտը սկսում է հասկանալ նյութը և յուրացնել այն ներքին խոսքով»: Լուռ կարդալու ուսուցումը կատարվում է տարրական դասարաններում, երբ երեխայի մեջ ձևավորվում է կարդալու հմտությունը: Որպես կանոն՝ լուռ ընթերցում իրականացվում է այն դեպքում, երբ երեխան տիրապետում է կարդալու կարողության հմտություններին: Երբ երեխան նոր է սովորում կարդալ, նրա մոտ դժվարություն է առաջանում լուռ ընթերցելը, քանի որ սկսում է կարդալ աչքերի շարժմամբ և տեսած տառերն ու բառերը իրենց հնչյունային համարժեքների վերածելով: Լուռ ընթերցանությունը մեծ կշիռ է ունենում այն դեպքում, երբ աշակերտը բարձրաձայն ընթերցանության կարողություն ունի:

[2] Տե՛ս՝ Ա. Ե. Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, «Լույս» հրատ., Երևան 1980, էջ 152:

Լուռ կարդալու ուսուցումն սկսվում է դեռևս առաջին դասարանից, երբ երեխաները լուռ կարդալով հետևում են ուսուցչի կամ ընկերների կարդալուն: Եթե ձայնով կարդալու ուսուցումը կատարվում է թե՛ դասարանում, թե՛ տանը, ապա լուռ կարդալու ուսուցումը հիմանականում կատարվում է դասարանում, դասի ընթացքում՝ ուսուցչի հսկողությամբ:

Լուռ կարդալով, աշակերտը սկսում է հասկանալ կարդացածի բովանդակությունը, սակայն, յուրացնելով բովանդակությունը, երեխան հաճախ դժվարանում է բառերով արտահայտել այն կամ հասկացածը հաղորդել մյուսներին: Նման իրավիճակում նպատակահարմար է երեխաներին հանձնարարել բարձրաձայն պատմել այն, ինչ կարդացել են ու հասկացել:

Շարունակելով կարդալ: Կարդալու այս տեսակը շատ արդյունավետ է տարրական դասարաններում: Երբ ուսուցչի հանձնարարությամբ աշակերտներից մեկը կարդում է, ամբողջ դասարանը աչքերով (մտքում կարդալով) հետևում է ընկերոջ ընթերցանությանը՝ պատրաստ շարունակելու այն հատվածից, որ կընդհատի ընթերցողը ուսուցչի պահանջով: Հետևում է ամբողջ դասարանը:

Բացատրելով կամ մեկնաբանելով կարդալն իրագործվում է նյութի բովանդակությունը բացատրելով ու մեկնաբանելով, քննարկելով գործող անձանց վարքը, արդարացնելով կամ մեղադրելով նրանց, բառային աշխատանք կատարելով, բառերի ուղղագրությունը բացատրելով, կետադրությունը մեկնաբանելով: Այս աշխատանքները նպաստում են նյութի բովանդակության հասկացմանը, կարդալու կարողության կատարելագործմանը, վերլուծական և քննադատական մտածողության զարգացմանը:

Բնագիրը բացատրելով կամ մեկնաբանելով կարդալ կարելի է տալ մի քանի ձևով՝ բովանդակությունը կամ մտքերը բացատրելով ու մեկնաբանելով, բառային աշխատանք կատարելով, այսինքն՝ անծանոթ բառերի բառիմաստները բացատրելով, ուղղագրություն բացատրելով, այսինքն՝ բնագրի յուրաքանչյուր բառ, որը ուղղագրական արժեք ունի, հատուկ ուշադրության է առնվում: Կարելի է նաև բնագիրը կարդալ՝ կետադրությունը բացատրելով:

Մեկնաբանող կամ հատվածաբար ընթերցանությունը նպաստում է բնագրի բովանդակության մեջ թափանցելուն, կերպարների էությունն ըմբռնելուն, դեպքերի

տրամաբանական և պատճառահետևանքային կապերը հասկանալուն, գաղափարն ու ենթատեքստը բացահայտելուն և մեկնաբանելուն:

Ընտրովի ընթերցանության ժամանակ աշակերտն ուսուցչի հանձնարարությամբ առանձնացնում է այս կամ այն գործող անձի խոսքերը, որևէ հատվածը կամ միտքը, դուր եկած տողերը և այլն՝ դրանով իսկ ընդգծելով այդ անձանց բնավորության գծերը, հեղինակի կամ ընթերցողի համար կարևոր գաղափարները: Այսպիսի ընթերցանությունը նպաստում է աշակերտների՝ կարդալու որակական հատկանիշների պահպանմանը ընթերցելու կարողության կատարելագործմանը և լուռ կարդալու ունակության ձևավորմանը:

Կարդացածն ընտրովի վերարտադրելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ քայլերը.

1. արտահայտիչ կարդալ բնագիրը, փորձել թափանցել նրա բովանդակության մեջ,
2. մեկ անգամ ևս կարդալ բնագիրը, որոշել նրա թեման և այն բաժանել տրամաբանական մասերի,
3. խմբավորել այդ հատվածները, վերնագրել,
4. առանձնացնել միևնույն պայմանանշան ունեցող հատվածները, դասավորել՝ ստեղծագործության մեջ դրանց գրված հաջորդականությամբ,
5. որոշել ընտրված հատվածի տրամաբանական կառուցվածքը,
6. պատմել ամբողջ բնագրից հատուկ հանձնարարությամբ ընտրված հատվածը[3]:

Դերերով ընթերցանությունը տարրական դասարաններում կարդալու ամենաարդյունավետ և հանձնարարելի ձևերից մեկն է և գործադրվում է գրեթե բոլոր դասարաններում:

Դերերով ընթերցանության ժամանակ պետք է ընտրել այնպիսի բնագիր, որը հարուստ կլինի գործող անձերով, որպեսզի հնարավոր լինի շատ աշակերտներ ընդգրկել:

Դերերով կարդալիս պետք է պահպանել մի քանի պայման.

- դերերի բաշխումը կատարել աշակերտների ցանկությամբ,
- որևէ դեր չպարտադրել, եթե աշակերտը չի կամենում այն կատարել,

[3] Տե՛ս՝ Ջ. Հ. Գյուլամիրյան, Խոսքի զարգացում, «Զանգակ» հրատ., Երևան 2013, էջ 44-45:

- երբեք երեխաներին չնմանեցնել հերոսներին:

Դերերով կարդալիս աշակերտները սխալվում են հեղինակի խոսքերի ընթերցման ժամանակ: Անհրաժեշտ է դերերով կարդալուց առաջ ուսուցիչը աշակերտների հետ միասին որոշի, թե քանի գործող անձ և հերոսներ են խոսում բնագրում:

Պետք է երեխաներին նախապատրաստել դերերով կարդալուն: Նախ կարևորվում է նյութի սահուն և հասկանալով կարդալը, ապա գլխավոր մտքի որոշումը, ենթատեքստի կռահումը և հերոսների բնավորությունների, տրամադրությունների և դրանց պատճառների բացահայտումը: Այս ամենին նպաստում է ընտրովի ընթերցանությունը: Այդ իսկ պատճառով էլ դերերով կարդալուն անպայման պիտի նախորդի կարդալու այդ տեսակը:

Մայրենիի դասերին 15-20 րոպե պետք է հատկացնել բնագրի ընթերցմանը, սակայն միևնույն նյութի անընդհատ ու միատեսակ ընթերցումը ձանձրացնում է աշակերտներին: Այդ իրավիճակից խուսափելու համար պետք է ընթերցումը կազմակերպել՝ կիրառելով կարդալու բոլոր տեսակները՝ շարունակելով, մեկնաբանելով, ընտրովի, դերերով:

Կարդալու կարողության ձևավորման խնդրում կարևոր է, թե ով է առաջինը կարդում դասի համար նախատեսված ստեղծագործությունը՝ ուսուցի՞չը, թե՞ աշակերտը, և ինչպե՞ս պետք է այն կարդալ՝ մաս-մա՞ս, թե՞ ամբողջությամբ: Գործնական բնույթի նյութերի ուսուցումը պետք է տարվի մասից դեպի ընդհանուրը գնացող հաջորդականությամբ, քանի որ դրանցում պարունակվող աշխարհաճանաչողական գիտելիքների մասերով ուսուցումը ավելի դյուրընկալ է: Բնագրի ամբողջությամբ կարդալուց հետո է միայն հնարավոր հասկանալ նրա հիմնական միտքը՝ գաղափարը, կռահել ենթատեքստը, և միայն այդ դեպքում ստեղծագործությունը կարող է երեխաների վրա դաստիարակչական ներգործություն ունենալ, առաջացնել համանման հույզեր ու զգացմունքներ: Այս դեպքում նախ ամբողջությամբ պետք է կարդալ բնագիրը և միայն դրանից հետո մասերով վերլուծել: Սա նշանակում է, որ բնագրի առաջին ընթերցումը պետք է լինի կատարյալ, արտահայտիչ ու հուզական, որպեսզի ստեղծագործության միտքն ամբողջությամբ հասնի աշակերտին:

Կարդալու հմտությունների զարգացումը

Կարդալու ուսուցման նշանակությունը: Ձեռք բերելով կարդալու կարողություն և այն հետևողական ու տնական վարժությունների միջոցով վերածելով հմտության՝ աշակերտը հնարավորություն է ստանում հաղորդակից դառնալու գիտության ու գրականության հրաշալիքներին, մարդկային հասարակության բազմադարյան պատմությանը, լեզվի մեջ և լեզվի միջոցով մեզ փոխանցված բազում սերունդների գիտական մտքի ստեղծագործություններին, որոնք ամփոփված են գրքերում:

Կարդալու ուսուցումը ինքնանպատակ չէ, այն երկակի նշանակություն ունի երեխայի համար՝ ինքնազարգացման ու գիտելիքների ձեռքբերման միջոց և գործնական կարողության ձևավորում: Տարրական դասարաններում, ինչպես բացատրական ընթերցանության, այնպես էլ քերականության դասերին տարվող աշխատանքներից ամենահիմնականը կարդալու հմտությունների ճիշտ մշակումն ու բազմակողմանի զարգացումն է, որի շնորհիվ երեխան հաղորդակից է դառնում իր մայրենի լեզվի հարստություններին, ձեռք է բերում գրքերի աշխարհ թափանցելու բանալին:

Կարդալու ուսուցման հիմունքները: Կարդալը հոգեկան բարդ գործողություն է, որի վերլուծությունը կօգնի ճիշտ ըմբռնելու ոչ միայն այդ մտավոր գործողության առանձին բաղադրամասերն ու դրանց փոխադարձ կապը, այլև դրանց ուսուցողական դժվարությունները և կարդալու ուսուցման ճիշտ կազմակերպման գիտական հիմունքները:

Կարդալը տվյալ լեզվի հնչյունների կամ հնչույթների ընդունված պատմական նշանների՝ գրերի կամ տառերի ճանաչման մտավոր գործողությունն է, քանի որ կարդալու համար պետք է ճանաչել և միմյանցից տարբերել բոլոր տառերը՝ ամենատարբեր ու բազմապիսի տառակապակցություններում: Սա կարդալու գործողության առաջին աստիճանն է, որը տեսողական գործողություն է:

Բայց կարդալու համար միայն տառերը ճանաչելը դեռևս բավական չէ, պետք է նաև դրանք վերածել իրենց համապատասխան հնչյուններին, այսինքն՝ տեսողական տպավորությունները խոսքային կինեսթետիկ շարժումների միջոցով վերածել համա-պատասխան ձայնային կամ հնչյունային տպավորությունների:

Սա արդեն կարդալու գործողության երկրորդ աստիճանն է, որը, ըստ էության, հնչյունաշարժողական գործողություն է:

Իրենցից իմաստային ամբողջական միավորներ ներկայացնող բառեր ստանալու համար պետք է կարողանալ նրա կազմի մեջ մտնող և որպես առանձին հնչյուններ ընկալվող լեզվական տարրական մասնիկները միավորել վանկերի, իսկ վանկերն էլ բառերի մեջ, այսինքն՝ տիրապետել հնչյուններն իրար հետ համակցելու, վանկի ու բառի մեջ դրանք միավորելու, ամբողջական բառերով կարդալու կարողությանը: Սա կարդալու գործողության երրորդ՝ հնչյունների կապակցման ու բառի ամբողջացման աստիճանն է: Բայց, ըստ էության, բառի մեջ մտնող և կարդալիս որպես առանձին միավորներ ընկալվող հնչյունների միաձուլումը, բառի ամբողջացումն ու ճիշտ արտաբերումը ևս դեռ իսկական կարդալ չէ: Կարդալու գործողությունն այս աստիճանում ևս դեռ թերի է, քանի որ չի ապահովում կարդացածի ըմբռնումը:

Այսպիսով, կարդալու գործողության չորրորդ աստիճանը կարդացածի հասկանալն է, առանց որի կարդալը չի կարող կատարյալ համարվել:

Ընթերցելիս կարդալու գործողության այս բաղադրիչ տարրերը տարբեր մարդկանց մոտ հանդես են գալիս տարբեր հարաբերությամբ, և հենց դրանով էլ պայմանավորված են միևնույն բնագիրը տարբեր ձևերով կարդալու, հասկանալու և վերապրելու անհատական տարբերությունները:

Կարդալու այդ անհատական տարբերություններն ամենից ավելի ցայտուն կերպով արտահայտվում են սկսնակ և վարժ կարդացողների միջև, որոնց կարդալու գործողությունը որակապես խիստ տարբեր է: Վարժ կարդացողը, ինչպես նշում է հայ նշանավոր հոգեբան ու մեթոդիստ Գ. Էդիլյանը, կարդալիս չի զգում, որ բառերը տեսնելը, դրանք լուռ կամ ձայնով կարդալը և կարդացածի միտքը հասկանալը միևնույն մտավոր գործողության տարբեր պահերն են և միմյանցից ետ ու առաջ են տեղի ունենում: Նրան թվում է, թե կարդալու գործողության այդ 3-4 աստիճանները անխզելիորեն կապված են իրար հետ և տեղի են ունենում միաժանակ, միևնույն վայրկյանին՝ իբրև ժամանակի մեջ անբաժանելի մի գործողություն[4]:

[4] Տե՛ս՝ Գ.Էդիլյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Թիֆլիս 1923, էջ 8:

Բարդ բնագրերը կարդալիս երբեմն մարդ կարդում, արտասանում է բառերը, բայց նույն պահին չի հասկանում կարդացածի միտքը, ուստի ստիպված երկրորդ կամ նույնիսկ երրորդ անգամ է անդրադառնում միևնույն տողին կամ բնագրին՝ այն ըմբռնելու համար: Մոտավորապես նույնպիսի երևույթ է տեղի ունենում նաև հոգնած կամ անուշադիր եղած ժամանակ, երբ մարդ կարդում-անցնում է կամ վայրկյաններ շարունակ հայացքը սևեռում է առանձին բառերի վրա՝ առանց դրանք ընկալելու: Նա փաստորեն «կարդում» է միայն աչքերով՝ առանց մտքի և հոգու մասնակցությամբ, կարդում է առանց կարդացածը հասկանալու:

Կարդալու որակական հատկանիշները

Կարդալու կարողության ձևավորման գերխնդիրը կրտսեր դպրոցականներին լավ կարդալ սովորեցնելն է: Սա ունի մի շարք որակական հատկանիշներ, որոնք սերտորեն կապված ու փոխադարձաբար պայմանավորված են: Լավ կարդալու որակներն են.



Ճիշտ կամ անսխալ կարդալ. Սա լավ կարդալու հիմնական բաղադրամասերից մեկն է: Ճիշտ կարդալ ասելով հասկանում ենք ձայնով, պարզ ու հստակ ընթերցելը, որի ընթացքում աշակերտը բաց չի թողնում ոչ մի տառ, վանկ, երբ բառի մեջ չի փոխում առանձին տառերի ու վանկերի տեղերը, դրանք չի շփոթում ուրիշ վանկերի ու տառերի հետ, երբ բառը չի շփոթում այլ բառի հետ, երբ կարդալիս նախադասության մեջ բաց չի թողնում առանձին բառեր կամ ավելացնում նորերը, երբ բառերն արտասանում է գրական հայերենի արտասանության չափանիշներին համապատասխան՝ պահպանելով հայերենի ուղղախոսության կանոնները:

Գիտակցորեն կամ հասկանալով կարդալ նշանակում է կարդացածը հասկանալ, ճշտությամբ վերարտադրել՝ պահպանելով ստեղծագործության մեջ ներկայացված մտքերի, դեպքերի հաջորդականությունը, տրամաբանական և պատճառահետևանքային կապերը: Կարդալը գիտակցական է այն ժամանակ, երբ կարդացողը ճիշտ և ամբողջականությամբ հասկանում է իր կարդացածը, այսինքն՝ հասկանում է բնագրի բառերի իմաստը, նախադասությունների միտքը, առանձին նախադասությունների կամ հատվածների միջև եղած կապերը, հիմնական միտքը՝

գաղափարը, կռահում է ենթատեքստը: Պետք է կարդացածի նկատմամբ գիտակցական վերաբերմունք մշակել, բնագրի վերաբերյալ որոշակի հանձնարարություններ տալ, կարդալուց հետո պատասխանել հարցերին, անծանոթ բառերը գտնել, բովանդակությունը վերարտադրել, որպեսզի կարողանան ուշադրությամբ ու գիտակցորեն կարդալ բնագիրը[6]:

Վարժ կամ սահուն կարդալ ասելով՝ հասկանում ենք առաջադրված նյութի՝ ամբողջական բառերով, առանց անհարկի դադարների, անհրաժեշտ չափով արագ ու սահուն ընթերցումը: Վարժ կարդալ սովորեցնելու համար կարևորվում են.

- խոսակցական օրգանների զարգացումը, արատների շտկումը շուտասելուկնե-րի, առածների, հանելուկների, բառախաղերի և այլ շարժուն խաղերի միջոցով,
- առողջապահական պահանջների պահպանումը. աշակերտներին պետք է սովորեցնել կարդալիս ճիշտ նստել, գիրքը պահել աչքերից որոշակի հեռավորության վրա, այնպես նստել, որ լույսը նորմալ ընկնի գրքի վրա,
- գործող անձերով հարուստ բնագրերի դերերով ընթերցելը, երբ վատ կարդացողը

[6] Տե՛ս՝ Ա. Ե. Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, «Լույս» հրատ., Երևան 1980, էջ 185:

ձգտում է կարդալ՝ լավ ընթերցող ընկերոջը ընդօրինակելով,

Արտահայտիչ կամ գեղարվեստորեն կարդալու կարողությունն ամենադժվարն է ձևավորվում, քանի որ այն շատ մոտ է ասմունքի արվեստին: Աշակերտների արտահայտիչ ու զգացմունքային ընթերցելու կարողությունը մեծապես պայմանավորված է նրանով, թե նրանք որքան ճիշտ են հասկացել ստեղծագործության բովանդակությունը, գաղափարն ու ենթատեքստը, հստակ պատկերացում ունեն դեպքերի և իրադարձությունների, ինչպես նաև հերոսների նկատմամբ հեղինակի ունեցած վերաբերմունքի մասին:

Արագ կարդալը ևս կարդալու որակական հատկանիշ է: Սա բանավոր խոսքի տեմպին հատուկ արագությունն է, որի ժամանակ ընթերցվող նյութի բովանդակության ընկալումը առաջ է անցնում վերարտադրումից: Արագ կարդալու ուղղությամբ աշխատանք կարելի է տանել միայն այն ժամանակ, երբ աշակերտն ազատ կարդում է ամբողջական բառերով և ունի լայն ընթերցողական դաշտ[7]:

Արագ կարդալու կարողության ձևավորման համար Ա. Տեր-Գրիգորյանն առաջարկում է մի շարք միջոցներ: Դրանցից է, օրինակ, տողերի կարճացումը և տպագրական չափերի մեծացումը, որը սահմանափակում է տողերում ընդգրկված տառանիշերի և բառերի քանակը՝ նպաստելով, որ աշակերտը աչքի մեկ ընդգրկումով կարդա տողի բոլոր բառերը:

Այսպիսով՝ լավ կարդալ նշանակում է կարդալ ճիշտ, հասկանալով, սահուն և արտահայտիչ: Լավ կարդալու հմտությունը միանգամից չի ձևավորվում: Այն իրականանում է քայլ առ քայլ, և յուրաքանչյուր քայլ ապահովում է հաջորդի ամրությունն ու ամբողջականությունը:

Ընթերցանության մեթոդիկա

Ընթերցանությունը մայրենի լեզվի տարրական դասընթացի հիմնական բաժիններից մեկն է: Ընթերցանության միջոցով են իրականացվում աշակերտների մեջ կարդալու տեխնիկայի զարգացման, գործնական ճանապարհով մայրենի լեզվի

[7] Տե՛ս՝ Ջ. Հ. Գյուլամիրյան, Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, «Զանգակ» հրատ., Երևան 2018, էջ 108-109:

ուսուցման, աշխարահաճանաչողական տարրական գիտելիքների հաղորդման ու դաստիարակության ծրագրային պահանջները:

Մայրենի լեզվի տարրական դասընթացի նպատակն է երեխաների ուսում-նառության առաջին օղակում իրականացնել հետևյալ խնդիրներն ու պահանջները.

1. աշակերտների մեջ մշակել ու զարգացնել կարդալու տեխնիկան՝ իր որակական բոլոր հիմանական հատկանիշներով,
2. գործնական կերպով սովորեցնել մայրենի լեզուն՝ հարստացնելով երեխաների բառապաշարը, զարգացնել աշակերտների լեզվական կարողությունները,
3. գեղարվեստական նյութերի ընթերցման, լեզվական տարրական գիտելիքների և կարողությունների ձեռքբերման ճանապարհով ձևավորել հայեցի մտածողություն, զարգացնել լեզվամտածողությունը, վերլուծական և քննադատական մտածողությունը:

«Տարրական դպրոցում բացատրական ընթերցանության դասերի նպատակն է՝ երեխաներին սովորեցնել կարդալ գեղարվեստական գրականություն, նախապատրաստել դրա հետագա պարբերաբար ուսումնասիրումը, ընթերցանության նկատմամբ հետաքրքրասիրություն առաջացնել և դնել գրագետ ընթերցողի ձևավորման հիմքեր»[8]:

«Դասին նախապատրաստվելու տեխնոլոգիան ենթադրում է նպատակի հետ կապված չորս խնդրի լուծում: Որոշել դասի մանկավարժական նպատակը՝ ելնելով դասանյութի հնարավորությունից: Աշակերտների համար որոշել այնպիսի ուսումնական գործունեություն, որի դաստիարակչական արդյունքը ուսուցչի նպատակն է: Աշակերտի համար պետք է որոշել մի այնպիսի նպատակ, հանուն որի նա կամավոր է ընդգրկվելու ուսուցչի նախատեսած գործունեության մեջ: Նպատակը որոշելուց հետո պետք է մտածել աշակերտի գիտակցության մեջ այն առաջացնելու մասին: Վերջին խնդրի լուծումն ուսուցիչը կարող է ապահովել արդեն ուսուցման մեթոդների միջոցով»[9]:

Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկայում դիտարկվում է բացատրական ընթերցանության մեթոդի հինգ բաղադրամաս:

---

[8] Տե՛ս՝ Ջ. Հ. Գյուլամիրյան, Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, «Լույս» հրատ., Երևան 1998, էջ 37:

[9] Տե՛ս՝ Մանուկյան Ս. Պ., Մանկավարժական և աշակերտական դասանպատակները, «Լուսաբաց» հրատ., Երևան 2003, էջ 151-152:





Խ. Աբովյանը ընդգծել է զրույցի կարևորությունն ուսուցման գործընթացում: Նա նշում էր զրույցի երկու կարևոր գործառույթների մասին, որոնցից առաջինն ունկնդրին նախապատրաստում է ստեղծագործության գաղափարի ընկալմանը՝ «բանալ զմիտս աշակերտների», և երկրորդ՝ երեխայի կենսափորձով ձեռք բերված գիտելիքների իմաստավորմանը նպատակաուղղված զրույց, որը աշակերտներին

տալիս է խոսքի նմուշ, ձևավորում է զգացածը, տեսածը, ապրածը վերապրելու, վերարտադրելու, դատողություններ անելու կարողություններ:

Տարրական դասարաններում մայրենիի դասի ժամանակ ընթերցած նյութի շուրջ բառային աշխատանքը պետք է իրականացնել գործնականորեն: Կարդացած ստեղծագործության շուրջ իրականացվող բառային աշխատանքի նպատակը անծանոթ բառերի ու դարձվածքների բացատրությունն է, ծանոթ բառերի հոմանիշների ու հականիշների ընտրությունը, ծանոթ արմատներով նոր բառերի կազմումը, դրանց յուրացումն ու ակտիվացումը: Աշակերտները բնագրից դուրս են գրում այդ բառերը, վերհիշում են դրանց ուղղագրության կանոնները:

Մայրենի դասերի ժամանակ ընթերցած ստեղծագործության շուրջ իրականացվող բառային աշխատանքի ուղղությունները.



Բնագրի շուրջ աշխատանքը որպես ընթերցողական կարողության ձևավորման միջոց: Բացատրական ընթերցանության մեթոդի՝ «Աշխատանք բնագրի շուրջ» բաղադրամասի մեթոդապես ճիշտ իրականացումը լուծում է կարևոր խնդիրներ: Ուսուցչի նախապես մշակած հարցերով, ստեղծած երկխոսություններով, կարդացած ստեղծագործության բանալի մտքերի բացահայտման ձևերով, հենակետային բառերի ճիշտ ընտրությամբ է պայմանավորված այդ գործընթացի արդյունավետությունը:



Ընթերցած ստեղծագործության բովանդակության վերարտադրում կամ պատմում: Բացատրական ընթերցանության բաղադրամասերից բավականին բարդ և կարևոր գործընթաց է պատմելու կարողության ձևավորումը: Աշակերտներին պատմել հանձնարարելուց առաջ պետք է նրանց նախապատրաստել:

Պատմելուն նախապատրաստող աշխատանքի իրականացման հաջորդականությունը.

- Մշակել այնպիսի հարցեր, որոնք նպաստում են կարդացած ստեղծագործության բովանդակության, կերպարների և գործող անձանց առարքների բացահայտմանը, պատճառահետևանքային կապերի, նկարագրվող դեպքերի ճիշտ հաջորդականության որոշմանը:
- Այնուհետև որոշել ստեղծագործության հիմնական միտքը՝ գաղափարը, ենթատեքստը, սեփական փորձը համեմատելու, համադրելու ստեղծագործության մեջ տեղի ունեցածի հետ:
- Հարցերը ձևակերպել հստակ, հակիրճ:
- Միաժամանակ մի քանի հարց չտալ:

Ամփոփում: ԽԻԿ համակարգի կշռադատումն է, որը կարող է իրականացվել ինչպես մեկ դասի որոշակի փուլում, այնպես էլ դասի ավարտին: Դասարանում ուսումնասիրվող յուրաքանչյուր ստեղծագործություն, թեմա կամ լեզվական նյութ պետք է ամփոփվի:

Մասնավորապես պետք է ամփոփել.

- Նյութի ուսումնասիրությունից սովորողների ստացած ճանաչողական նոր տեղեկությունները:
- Նյութից բխող դաստիրակչական-բարոյական հետևություններ անելու ունակությունը:
- Նյութի լեզուն և ոճը՝ բառերը, դարձվածքները, արտահայտությունները:
- Դրանց նորովի մեկնաբանման ու կիրառման ուղղությամբ երեխաների ձեռք բերած ունակությունները:

Ամփոփման դասերը պիտի օգտագործվեն սովորածը կիրառելու, ծանոթի միջոցով անծանոթը հայտնաբերելու, գիտելիքներեն ու կարողությունները նոր մակարդակի վրա բարձրացնելու նպատակով:

Տարրական դպրոցում մայրենիի դասի հիմնական նպատակներից են՝ երեխաներին կարդալու բոլոր որակական հատկանիշների պահպանմամբ կարդալ սովորեցնել, ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն առաջացնել և ընթերցողական կարողություն ձևավորել:

Ինչպես արդեն նշել ենք տարրական դպրոցում մայրենիի դասերն իրականացվում են բացատրական ընթերցանության մեթոդի միջոցով, որն էլ նպաստում է կարդալու կարողության զարգացմանը: Եվ չի կարելի բաղադրամասերի հաջորդականությունը խախտել, քանի որ դրանցից յուրաքանչյուրը նախապատրաստում է հաջորդին:

Միքայել Նալբանդյանը մայրենիի ուսուցման կարևոր նպատակներից մեկը համարել է ընթերցանությունը՝ որպես օրինակելի և կանոնավոր խոսքի ընդօրի-նակման, բառապաշարի հարստացման և երևակայական մտքի ընդլայնման միջոց:

ԳԼՈՒԽ 2

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

Ուսումնասիրության ընթացքում անցկացրել ենք հարցախույզ՝ արդյունքների վերլուծությամբ, կատարել ենք տարրական դպրոցի 2-րդ, 3-րդ և 4-րդ դասարանների մայրենիի դասագրքերի բնագրերի վերլուծություն,

Հարցաթերթիկի նպատակն էր պարզել տարրական դասարաններում մայրենիի դասին կիրառվող կարդալու տեսակների արդյունավետությունը կարդալու կարողության զարգացման գործում (տե՛ս հավելված 1):

Դիտարկենք հարցման արդյունքները:

Հարց 1

«Մայրենիի դասերին կարդալու ո՞ր տեսակն եք առավել շատ կիրառում» հարցին ուսուցիչների 40%-ը պատասխանել է շարունակելով, 20%-ը պատասխանել է դերերով, 20%-ը՝ բարձրաձայն, 13%-ը՝ ընտրովի և 7%-ը՝ բացատրելով: Պատասխանների վերլուծությունից պարզ է դառնում, որ ուսուցիչների մեծամասնությունը բնագիրը ընթերցելիս կարդալու տեսակներից կիրառում է շարունակելովը:

Տրամագիր 1

Դիտարկենք հարցման արդյունքները:



Ուսուցիչների ընդհանուր թիվը՝ 15

Հարց 2

«Ձեր կարծիքով մայրենիի դասին կարդալու ո՞ր տեսակն է ավելի արդյունավետ կիրառել: Հիմնավորե՛ք» հարցին ուսուցիչների մեծամասնությունը՝



47%-ը, պատասխանել է ընտրովի, 28%-ը՝ շարունակելով, 13%-ը՝ դերերով և 13%-ը՝ բարձրաձայն: Ուսուցիչները, հիմնավորելով իրենց պատասխանը, նշել են, որ կարդալու տեսակներից ավելի արդյունավետ է կիրառել ընտրովի ընթերցանությունը, քանի որ այն նպաստում է աշակերտի հիշողության, մտածողության զարգացմանը և ուշադրության կենտրոնացմանը:

Հարց 3

«Ի՞նչ նպատակով են կիրառվում կարդալու տեսակները» հարցին հարցվածներից 53%-ը պատասխանել է կարդալու որակական հատկանիշները զարգացնելու նպատակով, 20%-ը կարծում է կարդալու տեխնիկան, 13%-ը՝ վերլուծելու կարողությունը զարգացնելու նպատակով, իսկ 13%-ը նշել է այլ կարծիքներ: Ուսուցիչների պատասխանների վերլուծությունից պարզ է դառնում, որ մեծամասնության կածիքով կարդալու տեսակների կիրառման նպատակը կարդալու որակական հատկանիշների զարգացումն է:

Տրամագիր3



Հարց 4

«Կարդալու ո՞ր տեսակն է զարգացնում կարդալու կարողությունները» հարցին ի պատասխան ուսուցիչների 47%-ը նշել է բացատրելով կամ մեկնաբանելով, 20%-ը նշել է բարձրաձայն, 13%-ը՝ ընտրովի, 13%-ը՝ շարունակելով, իսկ 7%-ը՝ դերերով: Հիմնավորելով նշել են, որ բարձրաձայն կարդալու ժամանակ միաժամանակ և՛ տեսնում, և՛ լսում են բառը, ամրապնդում են ուղղագրությունը, շարունակելով կարդալու ժամանակ գործում և զարգանում է երեք զգայարան՝ լսել, տեսնել, հետևել, երբեմն նաև՝ շարունակել:

Տրամագիր 4



Հարց 5

«Ի՞նչ աշխատանքներ կարելի է իրականացնել կարդալու կարողության զարգացման ուղղությամբ» հարցին ուսուցիչները ներկայացրել են իրենց առաջարկները: Կից ներկայացնում ենք առաջարկներից մի քանիսը.

- Անծանոթ տեքստերի շուրջ աշխատանք, ինքնուրույն ընթերցանություն:
- Նախ պետք է աշակերտը բնագրի մեջ եղած բոլոր դժվար ընթերցվող բառերը կարդա շատ դանդաղ, վանկերով, հասկանա այդ բառերի իմաստը:
- Երբ երեխան կարդում է իր հորինածը, նա շատ ավելի պատրաստակամ է մոտենում հարցին: Արտադասարանական փոքրիկ պատմությունների հանձնարարումը նույնպես նպաստում է կարդալու կարողությունների զարգացմանը:
- Դասի ընթացքում ավելի հետևողական լինել, ուղղորդել աշակերտներին, նշել՝ ինչն է սխալ կամ թերի ստացվում, ցուցումներ տալ:

Տարրական դպրոցի 2-րդ, 3-րդ և 4-րդ դասարանների մայրենիի դասագրքերի բնագրերի վերլուծություն

«Ընթերցանությունը որպես ուսուցման գործիք տարրական դասարաններում>> թեմայի շրջանակներում ւիյն և մյմփորձարարական աշխատանք ենք իրականացրել՝ ուսումասիրելով 2-րդ, 3-րդ և 4-րդ դասարանի մայրենիի դասագրքերը(հեղինակներ՝ Վ. Սարգսյան և այլք): Ուսումնասիրության նպատակն էր պարզել, թե տվյալ դասագրքում զետեղված յուրաքանչյուր բնագրի համար կարդալու ո՛ր տեսակը կարելի է կիրառել:

Դիտարկենք մեր ուսումնասիրության և վերլուծության արդյունքները.

2-րդ դասարանի մայրենիի դասագիրք (տե՛ս հավելված 2)

Ուսումնասիրությունն իրականացնելուց հետո ունեցանք այսպիսի պատկեր. այն բնագրերը, որոնց ընթերցման ժամանակ կարելի է կիրառել կարդալու բոլոր տեսակները, կազմում են ընդհանուրի 47%: Այն բնագրերը, որոնց ընթերցման ժամանակ կարելի է կիրառել միայն կարդալու տեսակներից շարունակելովը և բացատրելովը, կազմում են 15%, և՛ շակունակելով, և՛ բացատրելով, և՛ ընտրովի տեսակների կիրառումը կազմում է 16%, և՛ շարունակելով, և՛ բացատրելով, և՛ դերերով՝ 2%, և՛ շարունակելով, և՛ ընտրովի, և՛ դերերով՝ 10%, և՛ շարունակելով, և՛ ընտրովի՝ 8%, և՛ շարունակելով, և՛ դերերով՝ 2%:

Տրամագիր 1



3-րդ դասարանի մայրենիի դասագիրք (տե՛ս հավելված 3)

3-րդ դասարանի մայրենիի դասագիրքն ուսումնասիրելիս ունեցանք հետևյալ պատկերը. այն բնագրերը, որոնց ընթերցման ժամանակ կարելի է կիրառել կարդալու բոլոր տեսակները, կազմում են ընդհանուրից 11%, այն բնագրերը, որոնց ընթերցման ժամանակ կարելի է կիրառել կարդալու տեսակներց և՛ շարունակելով, և՛ բացատրելով, կազմում են 11%, և՛ շարունակելով, և՛ բացատրելով, և ընտրովի՝ 11%, և՛ շարունակելով, և՛ ընտրովի, և՛դերերով՝ 43%, և՛ շարունակելով, և՛ ընտրովի՝ 19%, և՛ շարունակելով, և՛ դերերով՝ 2%, միայն շարունակելով՝ 5%: Այսպիսով, 3-րդ դասարանի դասագրքում զգալի մաս են կազմում այն բնագրերը, որոնցից յուրաքանչյուրի ընթերցման ժամանակ կարելի է կիրառել և՛ շարունակելով, և՛ընտրովի, և՛ դերերով կարդալու տեսակները:

Տրամագիր 2



4-րդ դասարանի մայրենիի դասագիրք (տե՛ս հավելված 4)

4-րդ դասարանի մայրենիի դասագիրքն ուսումնասիրելիս ունեցանք հետևյալ պատկերը . բոլոր տեսակները կազմում են 8%, և՛ շարունակելով, և՛ բացատրելով՝ 6%, և՛ շարունակելով, և՛ բացատրելով, և՛ ընտրովի՝ 10%, և՛ շարունակելով, և՛ ընտրովի, և՛ դերերով՝ 44%, և՛ շարունակելով, և՛ ընտրովի՝ 24%, և՛ շարունակելով, և՛ դերերով՝ 4%, միայն շարունակելով՝ 4%: Այսպիսով, 4-րդ դասարանի դասագրքում բնագրերն ընթերցելիս կարդալու տեսակներից կիրառվում են հիմնականում շարունակելով, ընտրովի և դերերով:

Տրամագիր 3



Փորձարարական, արդյունքների դիտարկում և վերլուծություն

Սովորողների ընթերցողական կարողությունների զարգացմանը նպաստում է դասերի ժամանակ ուսումնասիրվող դասանյութի բազմակի ընթերցումը: Սակայն միևնույն նյութի անընդհատ ու միատեսակ ընթերցումը ձանձրացնում է երեխաներին՝ նրանց մեջ մարելով ընթերցանության նկատմամբ հետաքրքրությունը: Այդ երևույթը կանխելու համար պետք է ստեղծագործության ընթերցումը կազմակերպել՝ կիրառելով կարդալու տարբեր տեսակներ, տարաբնույթ մեթոդական հնարներ, առաջադրանքներ: Վերջիններս նպաստում են ավելի ոգեշնչված կարդալուն, կարդացածի մեջ նոր իմաստներ տեսնելուն, դատողություններ և մտահանգումներ անելուն:

Փորձարարական աշխատանքի իրականացման նպատակն է պարզել, թե կարդալու տեսակներից յուրաքանչյուրն ի՛նչ կարողություններ կարող է զարգացնել կրտսեր դպրոցականի մոտ և ի՛նչ մեթոդական ցուցումներ մշակել, որոնք կնպաստեն կարդալու կարողության զարգացմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ մեր ուսումնասիրությունների արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

- Կարդալը մարդու հոգեկան և մտավոր աշխարհի հարստացման ու զարգացման ամենաարդյունավետ միջոցն է. կարդալու տեսակների կիրառումը զարգացնում է կրտսեր դպրոցականի կարդալու կարողությունները՝ որակական հատկանիշների պահպանմամբ, և յուրաքանչյուր տեսակի կիրառում որոշակի կարողություն է զարգացնում (հիշողություն, ուշադրություն, մտածողություն, արագ կողմնորոշվելու կարողություն):
- Բացատրական ընթերցանության բոլոր բաղադրամասերը զարգացնում են կրտսեր դպրոցականի մտածողությունը, վերլուծելու, համադրելու, հակադրելու, համեմատելու, պատճառահետևանքային և տրամաբանական կապերը գտնելու կարողությունները, բնագրի շուրջ իրականացվող մեթոդապես ճիշտ աշխատանքի շնորհիվ կարդալը դառնում է աշակերտի ճանաչողական հետաքրքրության, բազմակողմանի զարգացման միջոց:
- Բացատրական ընթերցանության բաղադրամասերից յուրաքանչյուրը նպաստում է կարդալու կարողության զարգացմանը: Եվ չի կարելի բաղադրամասերի հաջորդականությունը խախտել, քանի որ դրանցից յուրաքանչյուրը նախապատրաստում է հաջորդին:
- Փորձարարական դասերի վարման ընթացքում առանձնացրինք մեթոդներ, մեթոդական հնարներ, որոնց պարբերաբար կիրառումը զարգացնում է կարդալու կարողությունը: («Ուղղորդված ընթերցանություն», «Քառաբաժան», խմբային աշխատանք, հարցազրույց)

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Կրտսեր դպրոցականի համար կարդալու հիմնական միջոցը դասագիրքն է: Կարդալու կարողության զարգացման նպատակով առաջարկում ենք մայրենիի դասերին չսահմանափակվել միայն դասագրքում զետեղված բնագրերի ընթերցմամբ, այլ ինքնուրույն ընթերցանության դասաժամերին կարդալու կարողության զարգացման ուղղությամբ աշխատանք իրականացնել, ինչպես նաև կազմակերպել արտադասարանական և ընտանեկան ընթերցանություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ավագյան Լ. Մ., Ինքնուրույն ընթերցանությունը որպես կրտսեր դպրոցականի մտածողության զարգացման կարևոր գործոն, «Զանգակ», Երևան 2015:

2. Բալայան Լ., Ընթերցանությունը՝ ակտիվ գործընթաց, «Նախաշավիղ» 3-4. 2009, 128 էջ:

3. Գյուլամիրյան Ջ. Հ., Խոսքի զարգացում, «Զանգակ» հրատ., Երևան 2013, էջ 44-45:

4. Գյուլամիրյա Ջ. Հ., Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, «Լույս» հրատ., Երևան 1998:

5. Գյուլամիրյան Ջ. Հ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, «Զանգակ» հրատ., Երևան 2018, էջ 315:

6. Էդիլյան Գ., Հայոց լեզվի մեթոդիկա, Թիֆլիս 1923, էջ 8:

7. Թադևոսյան Թ., Ինքնուրույն ընթերցանությունը՝ կարդալու կարողությունների ձևավորման և զարգացման արդյունավետ միջոց, «Նախաշավիղ» 6. 2015, 64 էջ:

8. Թորոսյան Կ., Չիբուխչյա Կ. ն, Բալայան Ա. «Ինչպես պլանավորել մայրենիի դասը: 3–րդ դասարան», «Զանգակ» հրատ., Երևան 2017, էջ 512:

9. Մանուկյան Ս. Պ., Մանկավարժական և աշակերտական դասանպատակները, «Լուսաբաց» հրատ., Երևան 2003, էջ 151-152:

10. Չիբուխչյան Կ. Ռ., Ընթերցողական գործունեության ձևավորման տեխնոլոգիան տարրական դասարաններում, «Նախաշավիղ» 7. 2012, 64 էջ:

11. Սարգսյան Վ. և ուրիշներ, Մայրենի 2, «Մանմար», Երևան 2016, 159 էջ:

12. Սարգսյան Վ. և ուրիշներ, Մայրենի 3, «Մանմար», Երևան 2014, 159 էջ:

13. Սարգսյան Վ. և ուրիշներ, Մայրենի 4, «Մանմար», Երևան 2016, 175 էջ:

14. Տեր-Գրիգորյան Ա. Ե., Հայոց լեզվի մեթոդիկա, «Լույս» հրատ., Երևան 1980, էջ 152: